

ԻՍՊԱՆԵՐԵՆԻ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇ ԻՍԱՍՏԱՅԻՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Իսպանագիտական աղբյուրներում շատ տարակարծություններ է հարուցում հատուկ անունների արտահայտած իմաստի հարցը: Արդյոք հատուկ անունները օժտվա՞ծ են իմաստով: Այս հարցը դեռևս իր վերջնական լուծումը չի ստացել, և գոյություն ունեցող պատասխանները և մեկնաբանությունները պատկանում են տրամագծորեն հակառակ բևեռների: Լայն քննարկման առարկա են դարձել, մասնավորապես, Սոյուարտ Միլլի, Յեսպերսենի, Կոսերիուի և Յակոբսոնի տեսակետները: Սոյուարտ Միլլը գտնում է, որ հատուկ անունները դեմոտատիվ են, այսինքն՝ հիմնանշանակային, իմաստ չեն արտահայտում. *mesa* «սեղան» բառը, օրինակ, պարունակում է մի շարք հատկանիշներ, որոնք նրան օժտում են համապատասխան բովանդակությամբ, մինչդեռ *Madrid* հատուկ անունը չի պարունակում նման հատկանիշներ: Հատուկ անունները, ըստ Միլլի, նշանակում են այն, ինչի մասին խոսվում է, բայց ոչինչ չեն ասում դրա մասին: Ի հակադրություն հատուկ անունների, հասարակ անունները կոննոտատիվ են՝ հարանշանակային և ունեն իրենց իմաստները: (R.A.Perez 1996) Հակառակ տեսակետն է հայտնում Յեսպերսենը՝ գտնելով, որ հատուկ անունները ավելի շատ հատկանիշներ են նշանակցում (connotan), քան հասարակ անունները: «Հատուկ անունները, - գրում է նա, - նշում են ավելի մեծ թվով հատկանիշներ: Հասարակ և հատուկ անունների միջև գոյություն չունեն հստակ սահմաններ, քանի որ դրանց տարբերությունն ավելի շուտ քանակական է, քան որակական»: Ըստ Յեսպերսենի, գոյություն ունի իմաստային կոնկրետացման մի սանդղակ, որը սկիզբ է առնում հողից՝ ամենամվազ միավորից, անցնում է ածականների և հասարակ անունների միջով և հասնում մինչև հատուկ անունները, որոնք բոլոր տարրերից ամենակոնկրետն են իրենց իմաստներով: Այլ կերպ ասած, հարանշանակության, այսինքն՝ իմաստային այս աղյուսակում հողը զբաղեցնում է ամենացածր աստիճանը, հասարակ անունները զբաղեցնում են նախավերջին, իսկ հատուկ անունները՝ ամենավերինը, ուստի և դրանք լեզվի ամենահարանշանակային տարրերն են, իրենց բովանդակությամբ ամենաձգբիտները: (Jespersen O. 1975) Իսպանացի լեզվաբան Ռամոն Ալմելա Պերեսը քննադատում է այս երկու մոտեցումները՝ ցույց տալով դրանց հիմնական թերությունները: Նա գտնում է, որ նշված հեղինակները շփոթում են

և իմաստը (significado), որը ներելի է այդ ժամանակների համար: Տեղեկությունը, որ փոխանցում են առարկաները, դրանց իմաստը չէ, ոչ էլ այն հավասարազոր է հարանշանակության՝ կոննոտացիայի: Տեղեկությունը դուրս է գալիս անունից, երբ վերաբերում է մի բանի, որը գտնվում է «լեզվից դուրս», մինչդեռ անվան արտահայտած իմաստը գտնվում է «լեզվի ներսում», թեկուզ և ոչ որոշակի համատեքստում»¹, իսկ հարանշանակությունը՝ կոննոտացիան, գտնվում է համատեքստում, որը պարունակում է լրացուցիչ ծանոթացնող տվյալներ կամ տեղեկություններ:(R.A.Perez 1996) Հատուկ անունը, այսպիսով, տեղեկացնում է, հարանշանակում և նշանակում է, ինչպես որ հասարակ անունը. *París* և *Inpiz* տարբերը մեզ տեղեկություն են տալիս ինչ-որ բանի մասին, նշանակում և հարանշանակում են ինչ-որ բան ըստ իրենց համատեքստի: Սակայն այդ հատկություններից յուրաքանչյուրը տարբեր է մյուս երկուսից: Հատուկ անունը իր բովանդակությամբ ավելին չէ, քան հասարակ անունը, և մեկը, և մյուսը տեղեկացնում, նշանակում կամ հարանշանակում են տարբեր ձևերով: Եվ այստեղ խնդիրը տեղեկության, իմաստի կամ հարանշանակման քանակը չէ, այլ՝ որակը, այսինքն՝ տեղեկացնելու, նշանակելու և հարանշանակելու եղանակը: Փաստորեն, Սոյուարտ Միլլի և Յեսսպերսենի տեսակետների միջև տարբերությունը այնքան էլ հստակ չէ, քանի որ այն հենվում է միայն հիմնանշանակման՝ դեմոտացիայի և հարանշանակման՝ կոննոտացիայի բևեռացման վրա: Այս վերլուծությունները Ալմելա Պերեսին կանգնեցնում են երկու հիմնական հարցերի առաջ՝ ինչպե՞ս և ի՞նչ են նշանակում հատուկ անունները: Այստեղ առաջին հերթին հիշատակվում է Ամադո Ալոնսոյի և Էմիլիեն Ուրենյայի տեսակետը՝ «Հասարակ անունը նշում է մի առարկա՝ ասելով, թե դա ինչ է: Հատուկ անունը նշում է՝ ասելով, թե դա ինչպես է կոչվում անհատական առումով»: Հատուկ անունը հավասարազոր չէ բացառիկ անվանը, ոչ էլ բնորոշում է որևէ եզակի առարկա կամ երևույթ:(A.Alonso, P.E.Urepa) Գոյություն ունեն հասարակ գոյականներ, որոնք բնորոշում են միակ երևույթներ՝ *sol* «արև», *luna* «լուսին», մյուս կողմից՝ կան բազմաթիվ երևույթներ կամ առարկաներ ցույց տվող հասարակ անուններ՝ *ciudad* «քաղաք», *campo* «դաշտ» և այլն: Հատուկ անունները, ըստ էության, ներկայացնում են նույն պատկերը. կան եզակի՝ իրենց տեսակի մեջ միակ, հատուկ անուններ՝ *Jerusalín*, *Rocinante*, ինչպես նաև բազմաթիվ կամ բազմակի հատուկ անուններ՝ *Pedro*, *Valencia* և այլն:

Հատուկ անունները ունեն իրենց իմաստները, սակայն դրանք «հատուկ» իմաստներ են և հենց դրանով էլ տարբերվում են հասարակ անունների իմաստներից: Ինչ վերաբերում է այդ «հատուկ» իմաստների առանձնահատկություն-

ներին, այդ մասին հետաքրքրական դիտողություններ ունի նշանավոր ռումինացի լեզվաբան Կոսերիուն: Այս հեղինակի կարծիքով, հատուկ անունը միաթեք է (monovalente), անհատական և միաչափ (unidimensional), մինչդեռ հասարակ անունը, ընդհակառակը, բազմաթեք է (polivalente), տեսակային (genérico) բազմաչափ (polidimensional): Միաթեք է, քանի որ, չնայած կարող է վերաբերել բազմաթիվ էակների կամ երևույթների, այդուհանդերձ, յուրաքանչյուր դեպքում կարող է կապված լինել միայն դրանցից մեկի հետ: Անհատական է, քանի որ վերաբերում է կամ միայն մեկ երևույթի կամ էլ երևույթների մեկ ամբողջության, որն ընկալվում է որպես մեկ «անհատ»: Եվ վերջապես, հատուկ անունը բազմաչափ է, որովհետև այն կարգաբերում է (categoriza) իր նշանակած երևույթը՝ անկախ այն հանգամանքից, թե տվյալ երևույթը ինչ հատկանիշներով է օժտված: Ամեն դեպքում, այն հանդես է գալիս որպես միասնականացված (unificado) երևույթ: (E.Coseriu 1982) Այս վերլուծությունների հիման վրա Կոսերիուն կատարում է իր հիմնական և կարևորագույն եզրակացությունը՝ «Հատուկ անունները, որպես այդպիսիք, ոչ մի պարագայում չեն կարող անորոշանալ (indeterminarse): Երբ նրանք ստանում են անորոշացնող որևէ առկայացուցիչ, ինքնաբերաբար վերածվում են տեսակի և, որ առավել կարևոր է, դառնում են ուրիշ բառեր»: (E.Coseriu 1982) Հատուկ և հասարակ անունների իմաստային փոխհարաբերություններին վերաբերող մյուս կարևոր հարցը կապված է իմաստի ներածական և արտածական առանձնահատկությունների հետ: Ըստ Ալմելա Պերեյի լեզվաբանական միավորի ներածականությունը դրա իմաստային հատկանիշների ամբողջությունն է, որը կարող է հասկացվել որպես տվյալ զաղափարի սահմանում: Արտածականությունը, ընդհակառակը, առարկաների կամ երևույթների տեսակ է՝ դաս, որը կիրառելի է այս կամ այն արտահայտության մեջ: Հասարակ անուններում ներածականությունը և արտածականությունը, լինելով տրամագծորեն հակառակ երևույթներ, միմյանց նկատմամբ հավասարակշռված դիրք ունեն: Այլ կերպ ասած, որքան լայն է ներածականությունը, այնքան նեղ է արտածականությունը, և՛ հակառակը: Օրինակ, *vehículo* «ավտոմեքենա» բառի ներածականությունը ավելի նեղ է, քան՝ *bicicleta* «հեծանիվ» բառինը, ուստի *vehículo* «ավտոմեքենա» բառի արտածականությունը, իր հերթին, ավելի մեծ է, քան՝ *bicicleta* «բառինը»: Հատուկ անունները, ի տարբերություն հասարակ անունների, ունեն միայն մեկ ներածականություն և մեկ արտածականություն, որոնք սերտորեն շաղկապված են միմյանց հետ: Հատուկ անունները կարող են վերաբերել տարբեր բաների, բայց դրանք միշտ մնում են միաթեք և չեն դառնում տեսակի անվանումներ: Հատուկ անունների իմաստային հիմնական

առանձնահատկությունը անհատականացումն է, մասնավորեցումը: Եվ վերջապես, ներկայացնենք Ռոման Յակոբսոնի կարծիքը, որը զգալիորեն տարբերվում է նախորդ հեղինակների կարծիքներից: Յակոբսոնը զարգացնում է այն միտքը, որ հատուկ անունները ունեն շրջանաձև կառուցվածք և պատկանում են այն տեսակին, որին ինքը տվել է C/C անվանումը, այսինքն՝ ծածկագիր, որը գնում է դեպի ծածկագիր (código/ código): «Անգլերենի ծածկագրով, - գրում է Յակոբսոնը, - Jerry նշանակում է մի մարդ, որն ունի Jerry անունը: Շրջանաձևությունն ակնհայտ է. անունը նշանակում է ցանկացած մարդ, որին վերագրվում է այդ անունը»:(R. Jakobson 1949) Այսպիսով, տեսնում ենք, որ հատուկ անունների իմաստի վերաբերյալ իսպանագիտական աղբյուրներում միասնական մոտեցում չկա: Ընդհանուր է, սակայն, այն կարծիքը, որ հատուկ անունները ինչ-որ իմաստ արտահայտում են: Եիշտ է այդ իմաստը տարբեր է հասարակ անունների իմաստից, տարբեր են նաև դրանց արտահայտման ձևերը, սակայն զուտ *հնչյունական կառուցվածք* – իմաստ փոխհարաբերության տեսանկյունից, հատուկ և հասարակ անունների միջև լուրջ հակասություններ չկան: Շարունակելով հատուկ անունների իմաստի թեման՝ համառոտակի անդրադառնանք այն հարցերին, որոնք առանձին քննության առարկա չեն դարձել իսպանագիտական աղբյուրներում: Խոսքը վերաբերում է հատուկ անունների իմաստային առանձնահատկություններին. եթե հատուկ անունները իմաստ են արտահայտում, ապա ինչպիսի՞ն է նրանց իմաստային դաշտը, և օժտվա՞ծ են նրանք հասարակ անուններին բնորոշ իմաստային հատկանիշներով՝ հոմանիշությամբ, հակաանունությամբ, բազմիմաստությամբ, մենիմաստությամբ, բառիմաստի շրջմամբ, զարգացմամբ, նեղացմամբ, լայնացմամբ և այլն: Առաջին հայացքից, թվում է, թե հատուկ անունների պարագայում անիմաստ է խոսել նման երևույթների մասին, քանի որ, ինչպես տեսանք, հատուկ անունները իրենց իմաստներով անհատականացված են և մասնավորեցված, մինչդեռ բազմիմաստությունը կամ բառիմաստի նեղացումը պահանջում են ավելի լայն իմաստային դաշտ, որը հասարակ անունների տարածքն է: Սա որպես ընդհանուր դիտարկում: Մեր ձեռքի տակ եղած աղբյուրներում մեզ չհաջողվեց գտնել որևէ ուսումնասիրություն կամ գոնե ընդհանուր բնութքի մի հոդված, որում շոշափվեին այս հարցերը և տրվեին ինչ-ինչ մեկնաբանություններ: Կարելի է ենթադրել, որ հատուկ անունների իմաստային առանձնահատկությունների հարցը՝ հիշյալ հատկանիշների տեսանկյունից, դեռևս չի գրավել իսպանագետների ուշադրությունը: Այս համաձայնքը ստիպում է մի քանի խոսքով անդրադառնալ այդ կարևոր խնդրին: Կասկածից վեր է, որ տվյալ հիմնախնդիրը արժանի է լուրջ ուշադրության և համակողմանի քննության: Ընդ

որում, երևույթն այնքան լայն է, որ կարող է պահանջել մի առանձին մեծագրություն: Հեռու մնալով բոլոր հարցերը մեկ առ մեկ քննելու գայթակղությունից՝ մեր ուշադրությունը կենտրոնացնենք հատուկ անունների իմաստային երեք հիմնական առանձնահատկությունների վրա՝ *թեմատիկ-իմաստային բաժանման, հոմանիշության և բազմիմաստության*։ Ա. *Հատուկ անունների թեմատիկ-իմաստային բաժանման առանձնահատկությունները*

Հասարակ անունները, նշանակելով տարբեր երևույթներ և պատկանելով տարբեր բնագավառների, հնարավորություն են տալիս կատարելու որոշակի իմաստային բաժանում կամ դասակարգում: Բառերը խմբավորվում են ըստ այս կամ այն բնագավառի, թեմայի կամ երևույթի: Գոյություն ունեն բառերի թեմատիկ-իմաստային դասակարգման տարբեր սկզբունքներ և մոտեցումներ, որոնց հիմքում ընկած է բառերի ընդհանուր և թեմատիկ մերձավորությունը:

Սասնագետները լեզվի բառապաշարը բաժանում են ավելի քան երկու տասնյակ մեծ խմբերի՝ «Ֆիզիկական աշխարհի»՝ *monte* «լեռ», *lago* «լիճ» և այլն, «Կրոն և նախապաշարմունք»՝ *divinidad* «աստվածություն», *creencia* «հավատալիք» և այլն, «Մարդկություն, սեռ, տարիք»՝ *hombre* «մարդ», *esposo* «ամուսին», «Մարմնի մասեր և մարմնական գործառություններ»՝ *cabeza* «գլուխ», *pierna* «ազդր» և այլն: Հասկանալի է, որ հատուկ անունների պարագայում իմաստային մեծ դասակարգումն անհնար է, սակայն հատուկ անուններն ունեն իրենց տեսակները, որոնք թույլ են տալիս կատարել այլ կարգի խմբավորումներ: Գիտենք արդեն, որ հատուկ անունները բաժանվում են տարբեր խմբերի՝ անձնանուններ, տեղանուններ, վերնագրեր, հիմնարկների, կազմակերպությունների անվանումներ և այլն: Սրանից հետևում է, որ հատուկ անունները բաժանվում են ըստ տեսակների, որը շատ հեռու չէ հասարակ անունների թեմատիկ-իմաստային բաժանումից:

Բ. *Հատուկ անունների հոմանիշությունը* - ինչպես հայտնի է, հոմանիշ են համարվում այն բառերը, որոնք արտահայտում են նույն կամ մերձավոր իմաստներ, ինչպես օրինակ՝ *hombre* «մարդ», *persona* «անձ», *individuo* «անհատ» և այլն: Կախված համատեքստից, այս բառերը կարող են միմյանց փոխարինել, որն էլ հենց հոմանիշության էությունն է:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հատուկ անունների մի մասը կարող է օժտված լինել հոմանիշությամբ, ընդ որում, խոսքը վերաբերում է ինչպես տեղանուններին, այնպես էլ անձնանուններին: Տվյալ դեպքում հոմանիշությունը ձևավորվում է մասնավորեցված, անհատականացված մի շարք հատուկ անունների՝ նույն անձին կամ տարածք նշանակելու շնորհիվ:

Ըստ այդմ, հատուկ անվան հոմանիշ կարող է լինել միայն մեկ այլ հատուկ անուն՝ իր մասնավորեցված և անհատականացված իմաստով:

Այսպես, *España* հատուկ անունը զանազան համատեքստերում կարող է փոխարինվել մի ամբողջ շարք հոմանիշ տեղանուններով, ինչպես օրինակ՝

- *Península Ibérica* «Իբերական թերակղզի»
- *Península Española* «Իսպանական թերակղզի»
- *Península Pirenaica* «Պիրենեյան թերակղզի»
- *Monarquía Española* «Իսպանական միապետություն»
- *Iberia* «Իբերիա»:

Այս օրինակներից ուշագրավ են հատկապես առաջին երեքը, որոնք հանդես են գալիս որպես բացարձակ հոմանիշներ և կարող են միմյանց փոխարինել ցանկացած համատեքստում, մինչդեռ *Monarquía Española* և *Iberia* տարբերակները ցույց են տալիս իմաստային մերձավորություն, բայց ոչ նույնականություն: Նման օրինակների թիվը չափազանց մեծ է, քանի որ շատ հաճախ նույն տեղանքը ունի տարբեր անվանումներ՝ անկախ դրանց գործածականությունից: Բացի այդ, որպես բերված տեղանունների հոմանիշներ կարող են գործածվել նաև քաղաքների և անգամ մարդկանց անուններ: *La respuesta de España a Rusia fue inmediata* «Իսպանիայի պատասխանը Ռուսաստանին չհապաղեց» նախադասության մեջ *España* և *Rusia* երկրանունները հեշտությամբ կարող են փոխարինվել մայրաքաղաքների անուններով՝ *La respuesta de Madrid a Moscú fue inmediata* «Մադրիդի պատասխանը Մոսկվային չհապաղեց»: Նույն կերպ էլ *Madrid* և *Moscú* անուններին կարող են փոխարինել երկրների ղեկավարների անունները՝ *La respuesta de Zapatero a Medvedev fue inmediata* «Սապատերոյի պատասխանը Մեդվեդևին չհապաղեց»:

Հոմանիշների այս ցանկին կարող են ավելացվել նաև պետությունների ղեկավարների նստավայրերի անունները՝ *La respuesta de Moncloa a Kremlin fue inmediata* «Մոնկլոայի պատասխանը Կրեմլին չհապաղեց»: Ճիշտ է, այստեղ գործ ունենք փոխանունության դրսևորումների հետ, սակայն ներկայացված հատուկ անունների հոմանիշության փաստն անհերքելի է: Այստեղ կարևոր դեր են խաղում հատկապես բաղադրյալ հատուկ անունները, որոնց բաղադրիչները շատ հաճախ կարող են գործածվել որպես առանձին տարրեր՝ ստեղծելով հոմանիշության դաշտ: Անձնանունների հոմանիշությունը ենթարկվում է գրեթե նույն օրինաչափություններին: Մեկ մարդը կարող է ունենալ մեկից ավելի անուններ, բացի այդ, անձնանուն ասելով չպետք է հասկանալ լեզվական մեկ միավոր՝ մեկ բառ: Չարկ է նկատի ունենալ, որ անձնանունը կարող է բաղկացած լինել մի քանի առանձին անուններից, որոնք իրենց ամբողջությամբ

մեջ բնորոշում են այս կամ այն մարդուն: Վերլուծենք երկու օրինակ: - *Federico García Lorca*. Իսպանացի հանճարեղ բանաստեղծի անունն է, որը կարող է գործածվել չորս տարբեր ձևերով՝ ամբողջական կառուցվածքով և «մաս-մաս»՝ *Federico García Lorca es un gran poeta español* «Ֆեդերիկո Գարսիա Լորկան իսպանացի մեծ բանաստեղծ է», *García Lorca es un gran poeta español* «Գարսիա Լորկան իսպանացի մեծ բանաստեղծ է», *Federico es un gran poeta español* «Ֆեդերիկոն իսպանացի մեծ բանաստեղծ է», *Lorca es un gran poeta español* «Լորկան իսպանացի մեծ բանաստեղծ է»: Առանձին չի գործածվում այս անվան երկրորդ բաղադրիչը՝ *García*-ն, չնայած հանդիսանում է ամբողջական կառույցի լիիրավ անդամը: Ամեն դեպքում, նկատելի է, որ բազմանդամ անձնանվան հոմանիշությունը ձեռք է բերվում նրա բաղադրիչների մասնատման և առանձնացման արդյունքում:

- *Miguel de Cervantes y Saavedra*. Այս անվան երեք բաղադրիչներից առավել հայտնին է *Cervantes*-ը, որը շատ հաճախ գործածվում է *Miguel* անվան հետ՝ *Miguel Cervantes*, կամ առանձին՝ *Cervantes*: Ինչպես և նախորդ օրինակում, այստեղ նույնպես հատուկ անվան բաղադրիչների հոմանիշությունը հավասարաթեք չէ: Որոշակի համատեքստերում բոլոր այս անունները կարող են միմյանց փոխարինել, հատկապես, եթե դրանք արդյոք ծանոթ են նախորդ շարադրանքից: Ըստ այդմ՝ չի կարելի ասել՝ *Saavedra es un gran escritor español* «Սաավեդրան իսպանացի մեծ գրող է», եթե մինչ այդ չի գործածվել *Miguel de Cervantes y Saavedra* ամբողջական տարբերակը:

Այս վերլուծություններից կարելի է եզրակացնել, որ հոմանիշությունը խորթ չէ հատուկ անուններին, չնայած այն դրսևորվում է ուրույն եղանակով: Հատուկ անունների հոմանիշության առաջին և հիմնական առանձնահատկությունն այն է, որ, ի տարբերություն հասարակ անունների, դրանք ցույց են տալիս ոչ թե մերձավոր, այլ բացարձակ նույնական իմաստներ: Եթե իսպաներեն *hombre* «մարդ» բառին կարող են փոխարինել *persona* «անձ», *individuo* «անհատ» և այլ հոմանիշներ՝ այս կամ այն աստիճանի իմաստային մերձավորությամբ, ապա հատուկ անուններին կարող են փոխարինել միմիայն նույն անձին կամ տարածքին տրված այլ հատուկ անուններ՝ բացարձակ իմաստային նույնությամբ: Ըստ այդմ՝ *España* անվան հոմանիշ կարող է լինել նույն երկիրը կամ տարածքը բնորոշող մեկ այլ տեղանուն՝ *Iberia*, *Península Ibérica*, *Monarquía Española* և այլն: Հատուկ անունների հոմանիշների իմաստային ճշգրտությունը գալիս է դրանց բուն իմաստների ճշգրտությունից, այսինքն՝ անհատականացվածությունից կամ մասնավորեցվածությունից:

Հատուկ անունների հոմանիշության մյուս առանձնահատկությունը, ինչպես ասվեց, կապված է դրանց կառուցվածքի հետ: Բացի այն դեպքերից, երբ միևնույն անձը կամ բնակավայրը բնորոշվում է տարբեր անուններով, շատ հաճախ հոմանիշությունը ձեռք է բերվում բաղադրյալ հատուկ անունների մասնատման և որպես առանձին միավորներ գործածվելու արդյունքում: Խոսքը վերաբերում է այն հատուկ անուններին, որոնք իրենց կազմում ունեն մի շարք բաղադրիչներ՝ այլ հատուկ անուններ: Ասվածից կարելի է գալ այն կարևորագույն եզրակացությանը, որ հատուկ անունների հոմանիշությունը կախված է դրանց բաղադրիչների քանակից. որքան մեծ է հատուկ անունների մաս կազմող տարրերի թիվը, այնքան լայն է հոմանիշության դաշտը:

Գ. Հատուկ անունների բազմիմաստությունը

Եթե հոմանիշության դեպքում նույն կամ մերձավոր իմաստներ են արտահայտվում տարբեր բառերի միջոցով, ապա բազմիմաստության ժամանակ ունենք հակառակ պատկերը՝ մեկ բառը արտահայտում է մեկից ավելի իմաստներ: Վերևում տեսանք, որ Կոստերիոն հատուկ անուններին վերագրում էր միարժեքություն, որն ըստ էության, մոտ է մեմիմաստությանը: Ասվեց նաև, որ կան իրենց տեսակի մեջ եզակի երևույթներ բնորոշող հատուկ անուններ՝ *Jerusalín*, *Rocinante* և այլն: Հիշափ, թվում է, թե հատուկ անունների անհատականացվածությունը և մասնավոր բնույթը թույլ չեն տալիս խոսել բազմիմաստության մասին: Սակայն այստեղ վիճակը այնքան էլ պարզ չէ:

Ինչպես ասվեց, *Antonio* ասելով, հասկանում ենք մեկին, որը կրում է այդ անունը: Ըստ Յակոբսոնի «ծածկագրից» ծածկագիր» տեսության, անձնանունը հանգում է այն կրող անձին, իսկ անձը՝ անվանը: Սակայն նույն անունը կարող են կրել տարբեր մարդիկ, և միայն համատեքստը կարող է որոշել, օրինակ, թե խոսքը որ *Antonio*-ին է վերաբերում: Եվ որպեսզի պարզ դառնա այդ անվան տեղը, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում *Antonio* անունը կարիք ունի առկայացման, այլապես այն կմնա օդից կախված: Այստեղ, թերևս, կարելի է խոսել հատուկ անունների բազմիմաստության մասին, քանի որ, վերջին հաշվով, եթե մեկ հատուկ անունը բնորոշում է տարբեր մարդկանց, ապա այդ երևույթը կարող է համարվել բազմիմաստություն: Կարելի է ավելացնել և այն, որ նույն անունը կարող են կրել և մարդիկ, և բնակավայրերը, լեռները կամ գետերը, ինչպես օրինակ *Casares*, *Montaña*, *Villar* և այլն, ուստի այս երևույթը ևս կարելի է համարել բազմիմաստության տեսակ՝ չնոռանալով, որ նույն տեղանունը կարող է տարածված լինել բազմաթիվ վայրերում և վերաբերել տարբեր բնակավայրերի: Այս առումով, հետաքրքրական է Լատինական Ամերիկայում իսպանական տեղանունների տարածման պատմությունը: Երբ հայտնագործվեց Ամերիկան, այդ տարածքները կոչվեցին *Արևմտյան Հնդկաստան*, քանի որ

Կոլումբոսն իր նավարկությամբ փնտրում էր Զնդկաստան տանող նոր ճանապարհ: Զետագայում, երբ սկսվեց Լատինական Ամերիկայի գաղութացումը, նոր հայտնաբերված տարածքները հեղեղվեցին իսպանական տեղանուններով: 16-րդ դարի իսպանացի պատմիչ Էստեբան դե Գարիբայը գրում է, որ իսպանացիներն իրենց հետ տարան իրենց տեղանունները՝ *Granada, Castilla, Toledo, Trugillo, Guadalajara* և այլն, որոնք դրեցին Լատինական Ամերիկայի բնակավայրերի վրա: Այս ամենի արդյունքում, հիշյալ և մնացած տեղանունները ստացան բազմիմաստություն և սկսեցին նշանակել մեկից ավելի բնակավայրեր: Եվ ինչպես որ իսպաներենի բացատրական բառարաններում մեկ առ մեկ թվարկվում են այս կամ այն բազմիմաստ բառի բոլոր իմաստները, այնպես էլ իսպանական տեղանունների բառարաններում առանձին-առանձին թվարկվում են տեղանունների արտահայտած իմաստները, որպեսզի իսպանական *Toledo*-ն և *Guadalajara*-ն չշփոթվեն լատինամերիկյան *Toledo*-ի և *Guadalajara*-ի հետ: Որքան էլ տարօրինակ թվա, այդուհանդերձ, նման բազմիմաստությամբ է օժտված նաև *Armenia* հատուկ անունը, որը տարածված է նաև այլ երկրներում, մասնավորապես Իսպանիայի Գալիսիա գավառում և Կոլումբիայում: Եթե մենք ինչ-որ տեղ կարդանք *Fabricado en Armenia* «Արտադրված է Զայաստանում» նախադասությունը, ապա առանց հավելյալ տեղեկությունների, այսինքն՝ առանց *Armenia* անվան առկայացման կամ առավել ճշգրիտ տեղորոշման, չենք կարող հասկանալ, թե որ երկրի մասին է խոսքը: Անգամ հայերեն թարգմանելիս՝ այս հասարակ արտահայտությունը մեզ կարող է կանգնեցնել փակուղու առջև, քանի որ *Armenia* հատուկ անունը որքան էլ մասնավորեցված է ու անհատականացված, մույնքան էլ բազմիմաստ է: Եվ եթե պարզվի, որ տվյալ ապրանքը արտադրվել է ոչ թե Զայաստանում, այլ Իսպանիայի Գալիսիա գավառում կամ Կոլումբիայի Արմենիա քաղաքում, ապա հիշյալ արտահայտությունը պետք է թարգմանվի՝ «Արտադրված է Արմենիայում», այլ ոչ թե՝ «Զայաստանում»: Տեղանունը մեկն է՝ *Armenia*, սակայն արտահայտում է մեկից ավելի իմաստներ, որն ինքնին բազմիմաստություն է: Նույն հաջողությամբ *Armenia* կարող է դառնալ գրքի վերնագրի բաղադրիչ՝ *Historia de Armenia, Armenia ayer, hoy y mañana, Recuerdos de Armenia* և այլն: Այս կապակցություններից ոչ մեկի բուն իմաստը պարզ չէ և կախված է գրքի բովանդակությունից: Երեք վերնագրերն էլ կարող են կապված լինել Զայաստանի, կոլումբիական *Արմենիա*-ի կամ Գալիսիայի *Արմենիա* բնակավայրի հետ: Կամ՝ առաջինը կվերաբերի Զայաստանին, երկրորդը՝ Կոլումբիային, երրորդը՝ Գալիսիային և այլն: Այս օրինակները ցույց են տալիս, որ հատուկ անունները, լինելով անհատականացված և մասնավորեցված իրողություններ, այնուամենայնիվ, երբեմն բավարար չափով հստակ չեն իրենց իմաստային բովանդակությամբ: Ամեն դեպքում՝ երբ որևէ հատուկ անուն բնորոշում է տարբեր բնակավայրերի կամ անձանց, սա արդեն իսկ բազմիմաս-

տութիւն է՝ անկախ մնացած հանգամանքներից: Հասկանալի է, որ հատուկ անունների հոմանիշության և բազմիմաստության ակնհայտ դրսևորումների կողքին չի կարելի խոսել մեկ այլ իմաստային առանձնահատկության՝ հակահիշության, մասին: Հասարակ անունների հակահիշությունը զալիս է դրանց իմաստային բովանդակությունից, որը ենթադրում է միմյանց հակադրելի ինչ-ինչ հատկանիշներ՝ *calor* – *frío* «տաքություն»–«սառնություն», *proximidad* – *lejanía* «ներծավորություն» – «հեղավորություն», *vida* – *muerte* «կյանք» – «մահ» և այլն: Հատուկ անունները զուրկ են նման իմաստային բովանդակությունից, ուստի ուղղակի իմաստով չեն կալող ունենալ հակահիշներ:

Հանրագումարի բերելով այս հողվածում շարադրված փաստերն ու վերլուծությունները՝ կարող ենք եզրակացնել, որ իմաստային առումով, հատուկ և հասարակ անունների միջև կան մեծ ընդհանրություններ և որոշ տարբերություններ: Երկուսն էլ օժտված են ներքին բովանդակությամբ՝ իմաստով, չնայած հատուկ անվան իմաստը տարբեր է հասարակ անվան իմաստից: Համընկնում են նաև որոշ իմաստային առանձնահատկություններ, մասնավորապես՝ հոմանիշությունը և բազմիմաստությունը: Բացի այդ, հարկ է նկատի ունենալ, որ հատուկ անունները ձևավորվում են հասարակ անունների հիմքի վրա և շատ հաճախ պահպանում են դրանց սովորական իմաստները: Մյուս կողմից՝ հատուկ անունները վերածվում են հասարակ անունների՝ ենթարկվելով կրկնակի առկայացման, և վերագտնում իրենց նախնական իմաստները կամ ստանում նորերը:

Գրականություն

1. Ramón Almelá Perez, "Materiales para el estudio de la gramática española", Madrid, 1996
2. Martínez Amador, "Diccionario gramatical", Barcelona, 1956
3. Francisco Marcos Marín, "Curso de Gramática Española", España, 1987
4. Amado Alonso, Pedro Henríquez Ureña, "Gramática Castellana"
5. "Esbozo de una Nueva Gramática de la Lengua Española" Real Academia Española.
6. Eugenio Coseriu, "Teoría del lenguaje y lingüística general", Madrid, 1982
7. Roman Jakobson, "The phonemic and grammatical aspects of language in their interrelations", Paris, 1949
8. O. Jespersen, "La filosofía de la gramática, Barcelona, 1975
9. "Gramática Descriptiva de la lengua Española", Real Academia Española
10. Violeta Demonte, "Detrás de la palabra"

The present paper studies the problem of "semantic references" in relation to Spanish proper names. Stuart Mill, Ramon Almelá Perez, Roman Jakobson, Eugenio Coseriu, Jespersen and other linguists are named to be referred to in the study approaches.

The novelty of the article in the field of Spanish studies is that it explores the content-based semantic classification of proper names in the language with some manifestations of synonymy and polysemy.